

Դատական Գործ N: ԵՔԴ/1268/02/08

| | |
|---|--|
| Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է: | 18-12-2008 |
| Հայցվոր/դիմող | |
| Անուն: | Նահապետ և Կ ՍՊԸ |
| Հասցե: | Երևան, Ահարոնյան 7-12 |
| Այլ: | Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ |
| Պատասխանող | |
| Անուն: | Ալեքս Գրիգ ՍՊԸ |
| Հասցե: | Երևան, Տիչինայի 3 նրբ.2/2 |
| Քաղաքացիական գործի ստացման կարգը: | Առաջին անգամ |
| Ինքնուրույն պահանջ ներկայացնող: | |
| 3-րդ անձ | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Պահանջ: | ապրանքային նշանների խախտումները վերացնելու |
| Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը: | 5.5 |
| Պետական տուրք: | 8000 |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ պահանջ: | |
| Պետական տուրք: | |
| Ամսաթիվ: | 23-12-2008 |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Երևանի քաղաքացիական |
| Դատավորի անուն: | Խաչատուր Բաղդասարյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Երևանի քաղաքացիական |
| Դատավորի անուն: | Խաչատուր Բաղդասարյան |
| Որոշման ամսաթիվ: | 25-12-2008 |
| Դատաքննության ամսաթիվ: | 20-02-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 04-03-2009 |

| | |
|--|--|
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 10-02-2009 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 20-02-2009 |
| Այլ նշումներ: | նախնական դատական նիստ 10-02-2009թ. նախնական դատական նիստ 04-03-2009թ. |
| Ժամ: | 12:30 |
| | |
| Որոշման ամսաթիվը: | 27-02-2009 |
| Դատարան: | Մալաթիա-Սեբաստիա |
| Որոշման բովանդակությունը: | |
| Որոշման հիմքը | |
| Հոդված | ՀՀ քաղ. դատ. օր-ի 86 հոդ. Մաս 2-րդ Կետ 3-րդ |
| Ուղարկման ամսաթիվը: | 27-02-2009 |
| Էջերի քանակը: | |
| Գործին կից նյութերը: | |
| Գրության համարը: | |
| Դատական Գործ N: ԵՔԴ/1268/02/08 | |
| | |
| Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է: | 05-03-2009 |
| Հայցվոր/դիմող | |
| Անուն: | Նահապետ և Կ ՍՊԸ |
| Հասցե: | Ահարոնյան 7-12 |
| Պատասխանող | |
| Անուն: | Ալեքս Գրիգ ՍՊԸ |
| Հասցե: | Տիչինայի 3նրբ 2/2 |
| Քաղաքացիական գործի ստացման կարգը: | Այլ դատարանից ընդդատության կարգով |
| Ինքնուրույն պահանջ ներկայացնող: | |
| 3-րդ անձ | |
| Անուն | |
| Ազգանուն | |
| Հասցե | |
| Պահանջ: | ապրանքային նշանների խախտման պ/մ |
| Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը: | 5.5 |
| Պետական տուրք: | 0 |
| Պատասխանի ստացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը: | |
| Հակընդդեմ պահանջ: | |
| Պետական տուրք: | |

| | |
|----------------------------------|--|
| Ամսաթիվ: | 05-03-2009 |
| Նախագահող դատավոր | |
| Դատարանի անվանում: | Մալաթիա-Սեբաստիա |
| Դատավորի անուն: | Իսկուհի Համբարձումի Վարդանյան |
| Դատավոր | |
| Դատարանի անվանում: | Մալաթիա-Սեբաստիա |
| Դատավորի անուն: | |
| Որոշման ամսաթիվ: | 06-03-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 10-04-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 23-04-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 11-05-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 11-05-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 20-05-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 03-06-2009 |
| Դատաքննության ամսաթիվ: | 16-06-2009 |
| Ծանուցագիրը ուղարկվել է: | 13-03-2009 |
| Այլ նշումներ: | |
| Ժամ: | 12:00 |
| Ամսաթիվ: | 23-06-2009 |
| Հիմքը | |
| Հոդված | ՀՀ քաղ, դատ. օր-ի 60.61.106 |
| Որոշման բովանդակությունը: | Նշված քաղաքացիական գործել նշանակել ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանությունը որոշելու փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Ստավոր սեփականության գործակալության մասնագետներին, ճանաչելով նրանց որպես փորձագետների: |
| Ուր է ուղարկվել: | |
| Երբ: | |
| Ամսաթիվ: | 13-08-2009 |
| Որոշման բովանդակությունը: | Ո Ր Ո Շ ՈՒ Ս Քաղաքացիական գործի վարույթը կասեցումից հանելու և դատաքննությունը վերսկսելու մասին 13.08.2009թ ք. Երևան. Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ի.Վարդանյանս, ուսումնասիրելով քաղաքացիական գործն ըստ հայցի ^ա «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերության ընդդեմ «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի ^ա ընկերության ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին ^ա |
| | Պ ա ը գ ե ց ի |

| | |
|--|--|
| | <p>Հայցվոր «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերությունն 25.12.2008 թվականին հայց է ներկայացրել դատարան ընդդեմ «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի^ա ընկերության ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին: Երևանի Մալաթիա- Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 23-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել էր^ա ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանությունը որոշելու համար փորձաքննություն նշանակելու կապակցությամբ: 19.08.2009թվ-ին ստացվել է փորձագիտական եզրակացությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արդեն իսկ վերացել է քաղաքացիական գործի կասեցման հիմքերը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածով^ա Ո Ր Ո Շ Ե Ց Ի</p> <p>Քաղաքացիական գործի վարույթն ըստ քաղաքացիական գործն ըստ հայցի^ա «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերության ընդդեմ «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ի^ա ընկերության ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին հանել կասեցումից և վերսկսել քաղաքացիական գործի քննությունը : Գործի դատաքննությունը նշանակել 2009թ. սեպտեմբերի 4 -ին ժամը 10:30 -ին :</p> <p>Դատավոր^ա Ի. Վարդանյան</p> |
| <p>Դատաքննության ամսաթիվ:</p> <p>Ծանուցագիրը ուղարկվել է:</p> <p>Այլ նշումներ:</p> <p>Ժամ:</p> <p>Նիստերի դահլիճի համար:</p> | <p>04-09-2009</p> <p>17-08-2009</p> <p></p> <p>10:30</p> <p>1</p> |
| <p>Դատաքննության ամսաթիվ:</p> <p>Ծանուցագիրը ուղարկվել է:</p> <p>Այլ նշումներ:</p> <p>Ժամ:</p> <p>Նիստերի դահլիճի համար:</p> | <p>08-10-2009</p> <p>22-09-2009</p> <p></p> <p>11:30</p> <p>1</p> |
| <p>Հայցի լուծման ամսաթիվ:</p> <p>Հայցի լուծումը:</p> | <p>16-10-2009</p> <p>Մասով բավարարվել է մասով կարճվել</p> |
| Հոդված | |
| <p>Հոդված</p> | <p>ՀՀ Քաղ.դատ. օր-ի 109</p> |
| <p>Հակընդդեմ հայցի լուծումը :</p> | |
| <p>Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:</p> | |
| <p>Այլ նշումներ:</p> | |
| <p>Դատական ակտ (վճիռ, որոշում):</p> | <p>Քաղաքացիական գործ ԵՔԴ/1268/02/08 Վ Ճ Ի Ո</p> |

Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

16.10.2009թ ք. Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Նախագահող դատավոր^ա Իսկուհի Վարդանյան
Քարտուղարությամբ^ա Ջաբել Խաչատրյանի
Մասնակցությամբ^ա

Հայցվորի ներկայացուցիչ^ա Էդուարդ Նահապետյանի/ անձնագիր AA0454805, տրված 20.07.1996թվ. 004-ի կողմից, հանդիսանում է ՀՀ արտոնագրային հավատարմատար^ա առանց մասնագիտական գործունեության սահմանափակումների, թիվ 7 վկայական, հանդես է գալիս լիազորագրով/

Պատասխանողի ներկայացուցիչ^ա Դավիթ Մանթաշյանի /անձնագիրAA0310243, տրված 27.03.1996թվ. 003-ի կողմից, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, թիվ -356, հանդես է գալիս «Ալեքս-Գրիգ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված լիազորագրով/

Դռնբաց դատական նիստում, դատարանում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերության ընդդեմ «Ալեքս-Գրիգ» ՍՊԸ-ի^ա ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին^ա

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Հայցվոր «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերությունն, որը գրանցված է Կիպրոսի Հանրապետությունում, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում «Օդի» ապրանքի համար գրանցված N0469, 10470,11996,11997,11998,11920 «Ջեյոնայա Մարկա» ապրանքների նշանների սեփականատեր և այդ ապրանքային նշանների նկատմամբ ունի բացառիկ իրավունք: Ընկերությունը ՀՀ մտավոր սեփականության գործակալություն 27.10.2008 թվականին ներկայացրել ^ա «Ջեյոնայա Մարկա Ռժանայա» /հայտ N 20081119/, «Ջեյոնայա Մարկա Կեղովայա» /հայտ N 2081120/ և « Ջեյոնայա Մարկա Տրադիցիոնայա Ռեցեպտուրա» /հայտ N2081134/ ապրանքների համար գունավոր ապրանքային նշաններ^ա պիտակների ձևով:

Հետագայում հայցվոր «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերությանը հայտնի է դարձել այն հանգամանքը, որ Երևան քաղաքում վաճառվում է «Ջեյոնայա Մետկա» ապրանքային նշանով մակնիշված օդի, որի պիտակը շփոթության աստիճանի նման է «Ջեյոնայա Մարկա» օդու պիտակին, այդ կապակցությամբ 23.12..2008թվ. հայցադիմում է ներկայացրել Երևանի Քաղաքացիական դատարան և խնդրել վերացնել ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը:

25.12.2008 թվականին դատավոր Խ. Բաղդասարյանի որոշմամբ քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել :

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն, քաղաքացիական գործը 05.03.2009 թվականին ուղարկվել է Երևանի Մալաթիա- Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարան:

06.03.2009 թվականին դատավոր Ի. Վարդանյանի որոշմամբ, քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել:

2. Հայցվորի ներկայացուցչի իրավական դիրքորոշումը

| | |
|--|---|
| | <p>Մինչև դատաքննությունը սկսելը հայցվորի ներկայացուցիչ Էդուարդ Նահապետյանն իր 08.10.2009 թվականի գրավոր դիմումով հայտնել է, որ հրաժարվում է հայցապահանջից: Խնդրել է դատարանին քաղաքացիական գործի վարույթը կարճել : 3 . Դատարանի վերլուծությունը և եզրահանգումները</p> <p>Դատարանը նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև դատաքննությունը սկսելը, հայցվորի ներկայացուցիչը գրավոր դիմումով հայտնել է, որ հրաժարվում է հայցապահանջից, հանգեց այն հետևության, որ նման պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջների համաձայն, քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման :</p> <p>Իրեղեն ապացույց ճանաչված չորս շիշ օղիների հարցը քննելիս, դատարանը գտավ, որ այդ հարցը պետք է համարել լուծված, քանի որ հայցվորը դրանք ետ է վերցրել: Պետ տուրքի հարցը քննելիս, դատարանը գտավ, որ այդ հարցը պետք է համարել լուծված:</p> <p>Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-110 հոդվածով դատարանը</p> <p>Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Վլաքթոր Թրեյդինգ Լիմիթիդ» ընկերության ընդդեմ «Ալեքս-Գրիգ» ՍՊԸ-ի^ա ապրանքային նշանների նկատմամբ բացառիկ իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին^ա կարճել^ա հայցվորի ներկայացուցչի կողմից հայցապահանջից հրաժարվելու կապակցությամբ: Իրեղեն ապացույց ճանաչված չորս շիշ օղիների հարցը համարել լուծված: Պետ տուրքի հարցը համարել լուծված: Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:</p> <p>Դատավոր Ի. Վարդանյան</p> |
| Դատական ակտի ամսաթիվը: | 16-10-2009 |
| Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ: | 17-11-2009 |
| Էջերի քանակը: | 159 |
| Գործին կից նյութեր: | |
| Այլ նշումներ: | |
| Ամսաթիվ: | 18-11-2009 |
| Էջերի քանակը: | 159 |
| Գործին կից նյութերը: | |
| Գործն ուղարկվել է: | 18-11-2009 |
| Ուր: | դատարանի արխիվ |
| Գրության համարը: | |
| Գործը ստացվել է: | |

**Ներկայացվել է դիմում
միջնորդություն:**

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 20 Մայիս 2011